



ԱՄՍԱԹԵՐԹ
AYEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արամոնաւէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ
Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՓԵՏՐՎԱՐ 1939

ԹԻՒ 2



Տպարան ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՂ Գահիրէ
25 Շարա Թէվէիֆ

ԿՆՐԵՒՈՐ ԿԷՏԵՐ ԹԵՐԹԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

1. Մեր նշանաբանը.— Էական կեսերու մէջ միութիւն, ոչ էական կեսերու մէջ ազատութիւն, իսկ ամէն բանի մէջ սէր:— *Օգոստինոս*:

2. Նպատակը.— Ծառայել Քրիստոսի սրբազան դասին: Պայքարիլ մոլորութեանց դէմ: Տարածել Աւետարանի նշանաբանները, Քրիստոսի ձրի փրկութիւնը քաղաքացիներէն: Շեշտել ապաշխարութեան եւ վերսին ծնունդի անհրաժեշտութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը մտնելու: Մղել փրկուածները սրբազործուած կեանքի եւ այսպէս պատշաճել զանոնք Քրիստոսի փառաւոր վերադարձին:

3. Դաւանանքը.— Կը հաւատայ (1) Սբ. Դրոց Աստուծէ ներշնչեալ, անսխալական եւ հաւաստի ու կեանքի կանոնը ըլլալուն: (2) Ամենասուրբ Ներդրութեան: (3) Քրիստոսի Աստուածութեան: (4) Սբ. Հոգւոյն անձնաւորութեան: (5) Վերսին Ծնունդի: (6) Սրբազործութեան եւ Սբ. Հոգիով մկրտուած կեանքի: (7) Մեր Տերոջ Կրկին, անձամբ վերադարձին: (8) Մեղեցեալ յարութեան: (9) Ընդհանուր դասաստանի: (10) Սրբոց՝ Քրիստոսի հետ բազաւորութեան: (11) Նրկինքի եւ դժոխքի: (12) Սասանային անձնաւորութեան, բարի եւ չար հրեշտակներու գոյութեան: (13) Արդարներուն համար յաւիտեական կեանքի, իսկ մեղաւորներուն համար՝ յաւիտեական տանջանքի: (14) Սկեղեցւոյ միասնականութեան եւ անոր վերջնական յաղթանակին:

4. Կը հրատարակուի իբր ոչ-յարանուանական անկախ կրօնական ամսաթերթ, հայերէն եւ հայաստան քրեւերէն լեզուներով:

5. Աւարտին ծանուցումներ չեն ընդունուիր:

6. Զօդուածներ կ'ընդունուին անոնցմէ, որոնք հոգեւոր կեանքի անձնական փորձառութիւնը եւ դուրսէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունին, կը յարգեն բերքին ուղղութիւնը եւ ղրկուած յօդուածները կը ծառայեն հետապնդուած նպատակին:

7. Թերթիս սիւնակները տրամադրելի չեն վիճաբանական նիւթերու համար երբ անոնք պարզապէս վիճեր յարուցանելու կը ծառայեն եւ ոչ թէ լուսաբանութիւններու:

8. Զհրատարակուած յօդուածներ չեն վերադարձուիր:

9. Վեց ամիսէն նուազ պայմանաժամով բաժանորդագրութիւնը չընդունուիր:

10. Եղած հարցումներուն պատասխանելու կամ չպատասխանելու իրաւունքը կը վերապահուի այդ սիւնակը վարողին:

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

Ուշադրութիւն.— Բոլոր դրամական առաքումներ, յօդուածներ եւ թղթակցութիւնք պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով:—

K. T. SARIAN
2, Rue Ahmed Pacha Hasanen,
Shoubra, Cairo (Egypt).



ԱՄՍԱՐԵՐԹ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտոնատեր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. Թ. ՌԻՄՍԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՓԵՏՐՎԱՐ 1939

ԹԻՒ 2

Նւ հրեշտակ մը մեծ ձայնով կ'ըսէր. Աստուծմէ վախցէ՛ք ու փառք տուէ՛ք Անոր, վասնզի Անոր դատաստանի ժամը եկաւ:
Յայտ. 14:7

Աղօթելու համար կոչ մը

Համաշխարհային աղօթքի կոչի մասին է մեր խօսքը: Այս կոչով աշխարհի ամէն կողմ գտնուող քրիստոնեաներ, կը հրաւիրուին աղօթելու:

Ասոր համար կայ անգանցառելի ստիպողականութիւն մը: Աշխարհի ներկայ կացութիւնը ստիպողաբար կը պահանջէ մեզմէ յաճախ ծունկի վրայ գալու, բոլոր դէպքերու վրայ աւրող Աստուծոյ միջամտութիւնը հայցելու:

Աշխարհը աննախընթաց տագնապի մը մօտնուած է, և այդ տագնապին պատճառները մէկէ մեկի են. — ազգայնական, ցեղապաշտական, հայրենասիրական, անձնասիրական: Սոյն պատճառներ պատրաստ են միշտ մեր այս երկրագունդը տանելու դէպի անդունդ: Անոնք տակաւին գոյութիւն ունին և հետզհետէ կարծես աւելի շեշտուած ձեւով կը ներկայանան մեզի:

Անցեալ տարւոյ Սեպտեմբերին վերջերը բոլոր աշխարհ հեւ ի հեւ հետեւեցաւ գահավիժող քաղաքական դէպքերուն, և շունչը բռնած մէկ վայրկեանէն միւսը կ'սպասէր սպանդի տհաւոր առամին: Այդ ստեն բիւրաւոր մարդիկ աչքերնին և սրտերնին վեր վերցուցած աղօթեցին ջերմեռանդութեամբ: Եկեղեցիներ խոնուեցան բազմահազար հաւատացեալներու բազմութեամբ: Ուրիշ վայրերու մէջ ալ խումբ խումբ մարդիկ ձայներ բարձրացուցին Աստուծոյ՝ ահաւոր ուղէտը ինայելու համար այս աշխարհի: Եւ խնայուեցաւ ողէտը: Ասիկա սուկայն ոմանք վերագրեցին կարգ մը դիւանագէտներու խաղաղասիրական ջանքերուն, կամ ռամկապետութիւններուն պատերազմիւն անպատրաստութեան: Սակայն մեր համոզումը այն է՝ որ ողէտը խնայուեցաւ մեզի, որովհետեւ աղօթողներ եղան անոր համար:

Ասիկա ուրացում մը չէ թէ մարդկային ջանքեր ի զուր եղան, այլ Տէրը զանոնք գործածեց իր ձեռքին մէջ խաղաղութիւնը հաստատելու առ ի պատասխան փրկուածներու աղօթքին:

Արդեօք վտանգը բոլորովին անցած է: Դժուար է հաստատական պատասխան մը տալ այն հարցումին, հետեւաբար ներքի չէ նսեւ թուլացում մը աղօթելու մէջ: Ահա թէ ինչո՞ւ Համաշխարհային Աղօթքի Դաշնակցութիւնը կոչ կ'ընէ աղօթել շարունակելու:

Սակայն պատերազմի արհաւիրքէն զերծ մնալու համար չէ միայն աղօթքը, այլ մարդոց հոգիներուն փրկութեան գործին համար ալ պէտք է անդադար աղօթել: Այսօր ապականիչ աղբեցութիւններ նախճիրներ կը գործեն կեանքերուն մէջ: Հակակրօնական քանդիչ ոյժեր աւելի խտացած չարքերով երեւան կ'իյլեն: Խաւար դարերը յիշեցնող կրօնական հալածանքներ կան այսպէս կոչուած քրիստոնեայ երկիրներու մէջ: Այսօր նոր սերունդ մը կայ՝ որ մէկդի նետել կ'աշխատի կրօնքի սեղմումները որպէսզի ապրի անկաշկանդ, մարմնոյ ցանկութեանց համեմատ, հաճոյքի և սփռի անձնատուր ըլլալով:

Կայ նսեւ ուրիշ պատճառ մը աղօթքի համար, ան ալ եկեղեցիներուն ներկայ անգոր լիճակն է այս բոլոր փորձութիւնները զիմագրուելու: Եկեղեցին բաղկացնող անհատներուն կեանքին մէջ անկում կայ: Յարմար ուսանական սուր պայքար գոյութիւն ունի եկեղեցիներու միջեւ, և այս պարագան կարծես մոռցնել տուած է՝ ահանը, որ Քրիստոսի եկեղեցւոյն առաքելութեան նպատակն է, վնասակար և քանդիչ ոյժերու դէմ միացած՝ հոգիները փրկել չարին իշխանութենէն, մոլութեանց ճանկերէն,

մեղքի գերութենէն առաջնորդելով Քրիստոսի փառաւոր ազատութեան:

Բայց աղօթքը այնքան մեծ ուժ մըն է չար և խաւար ոյժերուն դէմ: Աշխարհի մարդիկ կրնան սկեպտիկ ըլլալ այդ մասին, սակայն, Աստուծոյ զուականերուն հաւատքն է՝ թէ աղօթքը միակ ոյժն է զոր կարելի է գործածել դժոխքի բանականներուն դէմ և յաղթելու անոնց:

Մենք մանաւանդ պիտի ուզէինք չեչաւի հոս Աստուծոյ հետ մարանչող աղօթքը որ այնքան բաղձալի Արթնութեան մը կրակը թափի եկեղեցիներու վրայ: Այս մութ պատկերին մէջ միեթարական և լուսաւոր կէտ մը սա՛ է՝ թէ Տէրը տեղ տեղ այս արթնութեան կարօտը դրած է ոմանց սրտին մէջ և զանոնք մղած է իրենց ծունկերուն վրայ անդադար աղօթելու մինչեւ որ Տէրը վերականգնանցնէ իր գործը:

Այս նպատակի համար Անգլիերէն թերթի մը խմբագիրը կոչ կ'ուղղէ իր կէս միլիոն ընթերցողներուն, իր կոչին մէջ ան կ'ըսէ ի մէջ այլոց, «Ինձի կը թուի թէ աղօթքի այս Խաչակրութիւնը մամնէն կարեւոր օգնութիւնն է որ կարելի ըլլայ այսօր կատարել աշխարհի համար: Ամէն կողմ աղօթաժողովներ մարած և մեռած են, հաւառակ այն իրողութեան՝ թէ աղօթքը հոգեւոր կեանքի շունչն է: Առանց աղօթքի մենք պիտի չորնանք և մեռնինք: Առանց աղօթքի երկիրքի և երկրի միջեւ հաղորդակցութիւնը կտրուած է: Աստուած կը պահանջէ մեզմէ իր երեսը փնտռել, եթէ անհոգ ենք ինչպէս կրնանք ակնկալել որ Ան օգնէ մեզի և օրհնէ մեզ:


«Պահ մը խորհեցէք եկեղեցիներուն վիճակին վրայ որ ողբալի է: Անոնք պարապ են, մարդիկ աւելի հաճոյսէր են քան Աստուածասէր: Արթ-

նութիւններ դադարած են, քրիստոնեաներսւ միջեւ վկայութեան և յաղթական կեանքը գոյութիւն չունի, մարդիկ այլեւս դարձի չեն գար: Տեղ տեղ իրերու այս վիճակը կրնայ քիչ մը փայլուն ըլլալ, սակայն ընդհանուր առումով կոցութիւնը գէշ է և միայն աղօթքը կրնայ փրկել մեզ: Աղօթենք այնպէս ինչպէս ասկից առաջ երբեք աղօթած չենք, արթննանք մեր թմբերէն ի բաց թօթափենք մեր գոհացած ի վիճակը»:

Յետոյ քանի մը համաշխարհային համբաւ վայելող կրօնական առաջնորդներու խօսքերէն մէջբերումներ կ'ընէ ըսելու համար թէ՛ «բացառիկ պայմաններու մէջ կ'ապրինք», որովհետեւ «աշխարհը մեծ անձկութեան մէջ է» և «դժոխքը մեր հետքերուն կը հետեւի» և «ընկերութեան հիմը խախտած ըլլալով, քաղաքակրթութիւնը կրնայ ճարճատիւ», կը վերջացնէ հետեւեալ խօսքերով, «Շատեր ինծի կը հարցնեն՝ թէ ինչո՞ւ մեծ Արթնութիւն տեղի չունենար և անիկա կ'ուշանայ գալու: Միայն մէկ պատասխան կայ. — Մենք պատրաստ չենք անոր համար: Աստուած ամենէն ընտրեալ օրհնութիւնը կը շնորհէ պատրաստուած մարդոց: Աստուած չի կըրնար տալ իր մեծագոյն պարգեւը չաղօթող եկեղեցիի մը: Աստուծոյ խրաքանչիւր խոստումին կցուած է պայման մը, եթէ այդ պայմանները լրանան, Աստուած յօժար է առատութեամբ ընել ամէն բաներէն աւելի՝ զոր մենք կը խնդրենք կամ կը խորհինք»:

Արդ, սիրելիներ մենք ալ ծունկի գանք, և աղօթենք ինչպէս աղօթեց մեր Փրկիչը. հոն միայն կարելի է գտնել լուծումը բոլոր դժուարութիւններուն: Աղօթենք:

Խ. Թ. Ս.



ԱՐԱՆԱՄ ԼԻՆԲԸՆ ՈՐՊԷՍ ՇՈԳԵՒՈՐ ՊԱՇՏՈՆԵԱՅ

«Կրին, ըսաւ Լինքըն — Կրին Արամ համ Լինքընի ժամանակակից լրագրող մըն էր — վաղը ես քաղաք կ'իջնամ մահամերձ կնկան մը կտակը պատրաստելու, եթէ գործ մը չունիս կը փափաքիմ որ ինծի ընկերանաս»:

Պր. Կրին անմիջապէս կ'ընդունի հրաւերը: Երբ կը հասնին հիւանդին տունը, զայն կը գտնեն արագօրէն իր վախճանին հասնելու վրայ: Գրբուած կտակը ստորագրելէ ետք հիւանդը դառնալով Լինքընին կ'ըսէ ժպտելով, «Հիմա այս ոչխարհի վերաբերեալ գործս գոհացուցիչ կերպով մը լրացած է: Գոհունակութեամբ կ'ըսեմ՝ թէ չուտով մտնելիք հանդերձեալ կեանքի համար աւելի կանուխէն պատրաստուած եմ: Տարիներ առաջ փնտռեցի ու գտայ Բրիստոնը որպէս իմ Փրկիչս: Նա եղած է իմ նեցուկս ու մխիթարութիւնս անցած տարիներուն մէջ, և ահա՛ այժմ Ան մօտ է

զիս տանելու մահուան գետէն անդին :
Ես մահէն չեմ վախնար Պր. Լինքըն» :

Լինքըն ամէն նայուածք ու շար-
ժուածեւի մէջ կարեկցութիւն ցոյց տա-
լով՝ ըսաւ կնկան, «Քու հաւատքդ առ
Քրիստոս իմաստուն և զօրաւոր է, և
ապագայի համար յոյսդ՝ օրհնեալ Շը-
նորհաւորութիւն ուրժանի ես այս կեան-
քէն օգտակարապէս անցնելուդ և հան-
դերձեալին՝ մեծ յոյսով մանկուդ հա-
մար» :

«Պր. Լինքըն, ըսաւ հիւանդ կի-
նը, չե՞ս ուզեր Սբ. Գիրքէն քանի մը
համարներ կարդալ» :

Հոն կայնողներէն մէկը ընտանե-
կան Սբ. Գիրքը մատոյց իրեն : Լին-
քըն փոխանակ Գիրքը տանելու սկսաւ
յիշողութենէն արտասանել 23րդ Սաղ-
մոսը մասնաւոր չեչտ զնելով 4րդ հա-
մարին վրայ, «Թէեւ մահուան շուքի
ձորին մէջ ալ պտտիմ, չորէն պիտի
չվախնամ, վասնզի դուն իմ հետս ես,
քու ցուպդ ու գաւազանդ՝ անոնք զիս
պիտի մխիթարեն» : Յետոյ տակաւին
առանց Սբ. Գրքին զիմելու Լինքըն
սկսաւ Յովնանու Աւետարանին 14րդ
գլխուն առաջին մասին, «Սրտերնիդ

չխռովի. Աստուծոյ հաւատացէք, ինծի
ալ հաւատացէք» եւն :

Այս և ասոր նման Սբ. Գիրքէն
ուրիշ հատուածներ խօսելէն ետքը
սկսաւ արտասանել ծանօթ հոգեւոր
երգերէն մխիթարական կտորներ,
վերջացնելով «Ով Խաչեալ Փրկիչ
Քրիստոս» երգով : Երբ Լինքըն վեր-
ջին տունը կ'արտասանէր, մեռնողին
դէմքին վրայ սկսաւ ի յայտ գալ խա-
ղաղութիւն և հանդարտութիւն մը :
Քանի մը վայրկեան ետքը նա գտած
էր իր հանգիստը Քրիստոսի բազուկ-
ներուն մէջ :

Դէպի տուն իրենց վերադարձը
խոր լուծեան մը մէջ սկսաւ : Պր.
Կրին վերջապէս խզելով լուծիւնը
կ'ըսէ, «Պր. Լինքըն կը խորհիմ՝ որ
արտակարգ բան մըն էր կատարեալ
գոտախազի և նոյնչափ կատարեալ
հոգեւոր պաշտօնեայի դերակատարու-
թիւնդ» :

Այս թելադրութեան երբ պատաս-
խանց — թէպէտ ոչ անմիջապէս — ը-
սաւ, «Աստուած, յաւիտենականութիւն
և երկինք այսօր ինծի շատ մօտ էին» :
Թարգ. Խ. Թ. Ս.

ԵՐԶԱՆԻԿ ԸԼԼԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Եթէ կ'ուզէք երջանիկ ապրիլ,
հետեւեալ կանոններուն ուշ դրէք. —

1. Օրս աղօթքով պիտի սկսիմ և
աղօթքով վերջացնեմ :

2. Ամէն օր պիտի ջանամ ընկե-
րոջս վրայ լաւ բան մը տեսնել :

3. Կեանքիս կանոնը պիտի ընեմ
հոգ չընել այն բաներուն համար որ
ձեռքս չեն :

4. Պիտի վարժեցնեմ տէքերս որ
շուրջս, բնութեան մէջ, և մարդոց

մէջ բարին ու գեղեցիկը տեսնեմ :

5. Պիտի ջանամ մէկը երջանիկ
ընել ամէն օր :

6. Ամէն գործի մէջ իմ լաւագոյնս
պիտի ընեմ և նշանաբանս պիտի ըլլայ
ուրիշները :

Երջանկութիւնը գետնէն չի բուս-
նիր, դրամով չի գնուիր, մեքենայով
չի շինուիր : Ասոնց նման պարզ կա-
նոններ պահելով և մաքուր կեանք մը
ապրելով միայն կրնայ մարդ երջանիկ
ըլլալ :

Հոգեւոր Պաշտօնեայի մը Երագը

(Իր հռահղը կը վերլուծուի)

Գործիս մէջ յոգնած՝ նստած էի
բազկաթուռի մը վրայ՝ Աշխատանքս
եղած էր խիստ և երկարաշունչ։ Շա-
տեր կը փնտռէին Քրիստոսը և շատեր
գտած էին զԱյն։ Գալով ինծի, գոր-
ծիս մէջ ուրախ էի, եղբայրներս միա-
ցած էին։ Քարոզներս և յորդորներս
յայտնի էր՝ որ կ'ազդէին ունկնդիր-
ներուս։ Եկեղեցիս կը լեցուէր խուռն
բազմութեամբ։

Յոգնութենէս անմիջապէս ինք-
զինքս կորսնցուցեր և տեսակ մը
թմրածութեան կամ կէս ինքնամոռա-
ցութեան մէջ ինկած էի։

Յանկարծ օտարական մը մասա
սենեակս, առանց նախապէս գուռը
զարնելու և ինծի լուր տալու։ Իր
հետը ունէր չափեր, քիմիագէտի յա-
տուկ գործիքներ, որոնք իրեն տարօ-
րինակ կերպարանք մը կուտային։

Օտարականը ուղղուեցաւ դէպի
ինձ և երկարելով ձեռքը ըսաւ. «Խնչ-
պէս է եռանդդ»։ Կարծեցի թէ հար-
ցումը տառիչութեանս մասին է, սա-
կայն հրճուեցայ լսելով իր վերջին
խօսքերը, որովհետեւ ես շատ գոհ էի
եռանդովս, և կոսկած չունէի, եթէ
օտարականը տեղեկանար անոր համե-
մատութեանց՝ պիտի ժպտէր ինծի։

Պահ մը ինծի անանկ երեւցաւ որ
այդ եռանդը նիւթէ շինուած բան մըն
է, այդ պատճառաւ ալ ձեռքս տարի
կուրծքիս վրայ և հանելով զայն ներ-
կայացուցի իրեն որպէսզի տեսնէ։

Օտարականը առաւ զայն, իր կը-

շիւքին, մէջ ուշադրութեամբ կշռեց,
և ես լսեցի որ կ'ըսէր, «հարիւր լիդր
է»։ Հազիւ կրնայի զսպել զոհունա-
կութեան միմունջ մը, սակայն, երբ
նկատեցի իր մտահոգ նայուածքը երբ
կը նօթագրէր իմ կշիռս, և երբ ես
անմիջապէս իմացայ որ ան վերջնա-
կան եզրակացութիւն մը հանած չէր
տակաւին այլ կ'ուզէր իր քննութիւ-
նը շարունակել, զսպեցի զոհունակու-
թեան արտայայտութիւնս։ Ան փշրեց
100 լիդր ձոյլ եռանդը և վերածեց
փոշիներու, դրաւ հալոցին մէջ և հա-
լոցը սաստիկ կրակին վրայ։ Երբ ա-
նոնք հալեցան հանեց կրակէն որպէս-
զի պաղի։ Անիկա պաղելով կը թանձ-
րանար, և երբ դարձուց հնոցին վրայ
շարք մը կեղեւանման խաւեր մէջտեղ
ելան, որոնք մուրճի հարուածին տակ
կը կոտրէին։ Այսպէս քանի մը ան-
գամ փորձուեցան և կրկին ու կրկին
կշռուեցան, և օտարականը մանրա-
մասնօրէն արդիւնքը կ'արձանագրէր,
փոփոխութիւնները կը նշէր։

Երբ լրացուց փորձարկութիւնը՝
ինծի ներկայացուց, և ականակ մը նե-
տեց վրաս՝ խառն վշտով և գութով,
և «Աստուած փրկէ քեզ» ըսելով ձգեց
սենեակը։ Գրուածը հետեւեալն էր։—

Յոնիոսի (պաշտօնեային անունը)
եռանդին վերլուծումը, թեկնածու մը
փառաց պսակին, Ընդհանուր կշիռ 100
լիդր։ Ասկից վերլուծուելով գտնուե-
ցաւ որ՝

Մոլեռանդութիւն	11	առ հարիւր	} փայտ, խոտ, եղէգ եւն.
Անձնական փառասիրութիւն	22	»	
Գովեստի սէր	19	»	
Յարանուանական հպարտութիւն	15	»	
Տաղանդի հպարտութիւն	14	»	
Իշխանութեան սէր	12	»	} մաքուր եռանդ
Աստուծոյ սէրը	4	»	
Մարդոց սէր	3	»	

Ես կը նեղուէի օտարականին տարօրինակ ձեւերէն, մանաւանդ իր վերջին նայուածքէն՝ բաժնուելու ատեն, սակայն երբ նայեցայ թիւերուն սիրտս ներսիդիս կապարի մը պէս ընկղմեցաւ: Մտովի ջանք մը ըրի սոյն արձանագրութեան ճշգրտութիւնը վէճի առարկայ ընելու, սակայն աւելի ուղղամիտ արամագրութեան համար ցընցում մը կրեցի օտարականին կողմէն եկած լսելի հառաչանքին պատճառաւ, որ կանգ առած էր միւս սրահին մէջ: Աղաղակելով ըսի, «Տէր, ազատէ զիս» և ծռնկի եկայ ամբողջ քովը, թուղթը ձեռքիս մէջ, աչքերս իրեն յառած:

Յանկարծ ան հայելիի մը փոխուեցաւ և տեսայ պատկերը իմ սրտիս: Հաշիւը և արձանագրութիւնը ճիշդ էին: Տեսայ, շոշափեցի, խոստովանեցայ և աւաղեցի զայն, ու աղաչեցի Տիրոջ

չատ արցունքներով որ ազատեի զիս ինքզինքէս: Վշտի բարձր աղաղակէս արթնցայ:

Անգամ մը ես աղօթեի էի փրկուելու համար դժոխքէն, սակայն աղօթքը՝ ինքզինքէս փրկուելու, անհամատօրէն աւելի ջերմեռանդ էր, ոչ ալ հանգստացայ կամ կանգ առի աղաղակելէ մինչեւ որ մաքրագործող կրակը գալով՝ անցաւ սրտիս մէջէն քննելով, վերաքննելով, հալեցնելով, այրելով և լեցնելով բոլոր խուցերը լոյսով, և սրբելով բոլոր սիրտս Աստուծոյ համար:

Երբ պանդխտութեանս աշխատանքները վերջ գտնեն, երկինքի մէջ պիտի ծնրադրեմ Քրիստոսին ոտքերուն առջեւ՝ օրհնելու զինքը այդ օրուան յայտնութեան համար:

ՅՈՆԻՈՍ

ՄԻԱՅՆ ՅԻՍՈՒՍ

Եպիսկոպոս Պէվըրիճ երբ իր մահուան անկողին մէջ էր իր բարեկամներէն մէկը հարցուց իրեն. «Ձիս կըրնա՞ս ճանչնալ»: Բառացի Եպիսկոպոսը պատասխան չառաւ: Իր սնարին քով գտնուող ուրիշ բարեկամներ և իր կինն ալ նոյն հարցումը կրկնեցին, սակայն և ո՛չ մէկուն պատասխանեց: Երբ վերջապէս երիտասարդ քարոզիչը անոր ականջին մօտեցաւ և հարցուց. «Սիրելի՛ եղբայր, Յիսուս Քրիստոսը

կը ճանչնա՞ս», մահամերձին զէմքին վրայ ժպիտ մը փայլեցաւ և իր բոլոր մնացած ոյժը հաւաքելով ըսաւ. «40 տարիէն ի վեր զինքը սիրած եմ և իրմէ սիրուած եմ, ո՛հ, սիրելի՛ փրկիչըս, ի՞նչպէս կրնամ մոռնալ զինքը, Անոր պէտք ունիմ»: Ամէն մարդ միայն Յիսուսի պէտք ունի թէ այս աշխարհի և թէ յաւիտենականութեան մէջ, բայց մանաւանդ մահամերձ հաւատացեալը իր հոգեւոր քրտազնայնութեան մէջ չի տեսներ և ո՛չ մէկ բան բացի Յիսուսէն, Սիրելի՛ Յիսուս:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

ԱՍՏՈՒԾՈՅ ՎԵՐՉՆԱԿԱՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

Ճշմարիտ քրիստոնեայ եկեղեցի-
ների սնխտիր կ'ընդունին ամենուրեք
թէ՝ Աստուածաշունչը Աստուծոյ ներ-
շնչեալ Անոր միակ և վերջնական
յայտնութիւնն է։ Յայտնութիւն բառը
կը նշանակէ բանալ քողը քողարկեալ
բանի մը վրայէն։ Սակայն Աստուա-
ծաշունչի յայտնութիւնը կը նշանակէ
թէ Աստուած ինքզինքը յայտնած է
մարդկային ցեղին մարգարէներու,
առաքեալներու և վերջին օրերս Քրի-
ստոսի միջոցաւ (Եբր. 1:1-2)։ Այն-
պէս որ կարող ենք ըսել թէ քրի-
ստոնէութիւնը որ միակ ճշմարիտ
կրօնք մըն է, ունի Գիրք մը որուն
հեղինակը Աստուած ինքն է։ Ուրեմն
անիկա չի նմանիր Վէտաներու, Զէնդ-
Ավեստաներու, և ուրիշ կրօնական
գիրքերու որոնց հեղինակները սխա-
լական մարդիկ են։ Ահաւասիկ մեծա-
գոյն տարբերութիւնը Աստուածաշուն-
չի և միւս կրօնական գիրքերուն մի-
ջեւ։ Որովհետեւ Աստուած ինքն է հե-
ղինակը ան սխալական չի կրնար ըլ-
լալ միւսներուն նման։ Արդարեւ մար-
դիկ գիտական սխալներ գտնելու ջա-
նացած են, սակայն ասիկա արդիւնքն
է Աստուածաշունչին մոկերեսային ու-
սումնասիրութեան։

Ատիկա նաեւ առարկայ եղած է
կատաղի յարձակումներու, Վօլթէրի,
Թոմաս Փէյնի պէս մարդոց կողմէ։
Սակայն անոնք միշտ պարտուած են
անկէ։ Վօլթէր յուսահատութեան սար-
սափի մէջ մեռաւ, իսկ Թոմաս Փէյն
գինովի պէս։ Աստուածաշունչը եղաւ
ան կրօնիտեայ ժայռը՝ որուն բաղ-
խողները իրենք փշուռեցան։

Ատիկա մարդոց հիացումին առար-
կայ եղած է բոլոր դարերու մէջ։
Գարլայլ ըսած է, «Աստուածաշունչի
նման գիրք մը եղած չէ և պիտի չըլ-
լայ ալ»։ Լօկ փիլիսոփան վկայած է
ըսելով, «Աստուածաշունչը ունի որ-
պէս հեղինակ զԱստուած, որպէս նիւթ
անսխալ ճշմարտութիւնը և որպէս նը-
պատակ՝ յաւիտենականութիւնը»։

Արդարեւ պէտք է որ այսօր ալ
ամէն մարդ իր գիրքը շտկէ հոնդէպ
Աստուածաշունչին, առանց տարուելու
մարդոց ենթադրութիւններէն և սխալ
տեսութիւններէն։ Առանց անոր կը
նմանինք իր ուղեցոյցը կորսնցուցած
նաւուն կամ առանց առաջնորդի ճամ-
բորդին։

Քրիստոնեայ քարոզիչ մը այն ա-
տեն միայն կրնայ հեղինակօրէն խօ-
սիլ երբ կը հաւատայ թէ Աստուածա-
շունչը սկիզբէն մինչեւ վերջը Աստու-
ծոյ անսխալ խօսքն է։ Ինչպէս մարդ-
կային ցեղին անսխալ առաջնորդ մը
պէտք էր, որովհետեւ Սն սէր է,
բարի է, և սուրբ։

Աստուածաշունչը միակ գիրքն է
որ կրնայ մարդիկը լուսաւորել, նկա-
րագիրը ազնուացնել, կեանքի դժուա-
րին պարագաներուն մէջ մխիթարել
փորձութիւններու դէմ զօրացնել և
նեղութիւններու մէջ սփոփել։ Թող
մարդիկ յարձակին իր վրայ ան կեցած
է և պիտի կենայ յաւիտեան։

«Ով Տէր, քու խօսքդ յաւիտեան
հաստատ է երկնքի մէջ»։

Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

Արթուրեան համար փափափ (*)

Երբ ես այցելեցի Եւրոպայի ուռա միսիօնարական դաշտերը, տկոնատես եղայ ամենահրաշալի կերպով Աստուծոյ գործելուն: Մարդիկ կը քալէին 30 մղոն ճամբայ, կամ ձիերով ու կառքերով 200 մղոն ճամբայ, ժողովներուն ներկայ ըլլալու: Ժողովները կը տեւէին 3 ժամ կամ աւելի երկար, և երբեմն օրակոն երեք ժողովներ տեղի կ'ունենային, այսուամենայնիւ մարդիկ կը գտնաւատէին անոնց անբաւականութեան մասին: Անոնք շատ կանուխէն կը կատարէին իրենց յատուկ ժողովներ երբ տակաւին պաշտօնեաներէն ոչ մէկը չկար մէջտեղ, այդպէս իւրաքանչիւր օր չորս ժողովներ տեղի կ'ունենային:

Ժողովները ծանուցանելու համար դրամ ծախսելու պէտք չկար: Իրարու լուր կուտային և ամէն մարդ կուգար, մինչեւ որ տեղ չըլլալուն ոտքի վրայ կը կենային դասին մէջ, բեմին վրայ, կամ ո՛ւր որ տեղ կը գտնէին՝ կը նստէին: Խուռնամբոխ բազմութիւն կը լեցնէր մեծագոյն ժողովասրահը: Ես լաւ կը յիշեմ անգամ մը քարոզեցի երեք հազար հոգիէ բաղկացած բազմութեան: Ո՛հ, անոնք ի՛նչպէս մտիկ կ'ընէին: Այո՛, բացօդեայ տեղ մը դարձեալ միեւնոյնը տեղի ունեցաւ: Երեք ժամ անոնց անձրեւին տակ կենալը տեսած եմ — այրեր, կիներ և տղաք — անքան անօթի էին անոնք:

Ո՛հ, Աստուած ինչպէ՛ս դործեց: Սկիզբի մէկ վայրկեանէն արթնութեան հոգին օդին մէջ էր: Անոնք կ'աղօթէին, կ'երգէին, կը վկայէին, արցունքներ կը հոսէին իրենց այտերէն վար: Զարնուած սրտերով անոնք կ'ունկնդրէին տրուած պատգամներ:



Զօն Օսկալս Սմիթ

րուն, և երբ հրաւեր կ'ուղղուէր, անոնք կը խոնուէին բեմին առջեւ և իյնալով իրենց ծունկերուն վրայ արտասուածոր աչքերով կ'աղաղակէին Աստուծոյ գթութեան համար: Սակայն դառնամ իմ օրագրութեան, անիկա լաւագոյնս պիտի բացատրէ ըսելիքներս: «Տեղի ունեցածները նկարագրեմ՝ պարզապէս անկարելի է: Սբ. Հոգին ինքը կը գործէր և եղածը հրաշքէ նուազ բան մը չէր: Ամէն գիշեր խոշոր ժողովասրահը տաւացիօրէն կը խոնուէր և վերջին օրերուն՝ սրահը իր ամպիոնով և նրբանցքով չէր բուռնուր և կող հոծ բազմութեան, մինչեւ իսկ ոտքի վրայ կայնելու տեղ չկար: Ամէն գիշեր հոգիներ դէպի առաջ կուգային փրկութեան ի խնդիր և խորանին առջեւը կը լեցուէր կրկին ու կրկին: Մեծ թիւ մը կը կազմէր առաջին անգամ ըլլալով Բրիտանոյ ընդունողներ: Ո՛րքան էր թիւը չեմ գիտեր:

«Բայց առաւօտեան ժամը 10ին ժողովը խնջոյքի գեղեցիկ պահ մը եղաւ: Առաջին օրը առաւօտուն վարի գլխաւոր ժողովասարահը լեցուն էր, մէկ քանիներ երգչախումբին նստարաններուն վրայ նստած: Երկրորդ օրը եկողները աւելի էին, իսկ երրորդ օրը ալ աւելի. և սկսաւ փառաւոր կոտորուիլը սրտերուն: Սակայն չորրորդ առաւօտուն այլեւս տեղ չկար: Երգչախումբին նստարանները գրաւուած էին: Աւելորդ անոններ դրուեցան ամպիոնին վրայ և ո՛ւր որ պարտապէս տեղ կար, տակաւին մարդիկ կը շարունակէին գալ, մինչեւ որ շատեր ստիպուեցան մնալ ոտքի վրայ նստարաններուն մէջանդի անցքին վրայ: Աստուծոյ զօրութիւնը վերէն իջաւ ունկնդիրներուն վրայ: Այրեր ու կիներ ծունկի կուգային ամէն տեղ և ո՛ւր, այնպիսի աղօթքներ, այնպիսի արցունքներ, այնպիսի համբերութիւն և խոստովանութիւն, այնպիսի ուրախութիւն և խաղաղութիւն, այնպիսի վկայութիւններ: Եւ ինչպէ՞ս կ'երգէին, արդարեւ անիկա երկրի վրայ՝ երկինք մըն էր:

«Ժողովի վերջաւորութեան ուրիշ ժողովի մը համար հրաւեր եկաւ, կէսօրէն ետքը ժամը 4ին Դարձեալ պիտի խօսէի: Հաւանեցայ և ժամը 4ին անոնք եկան: Դարձեալ Աստուծոյ զօրութիւնը նեցկայ էր: Արցունքներ առատօրէն կը հոսէին: Անպատմելի ուրախութիւն և լեցուն փառք կը պատկերանար շատ մը դէմքերու վրայ: Լռութեան մէջ ծնրադրեցինք Աստուծոյ առջեւ և շատ մը անձերու վրայ Հոգին իջաւ: Ժամը վեցուկէսին կրկին քարոզեցի նաեւ ժամը 8ին—4 անգամ մէկ օրուան մէջ:

«Անմիջապէս սենեակս քաշուեցայ, մէկը դռնս զարկաւ: Ուսանող մը ներս մտաւ և պատմեց ինծի՝ թէ

ինչպէս Տէրը խօսած է իրեն: Նկարագրեց սրտին ծարաւը ու ըսաւ՝ թէ որոշած է ամբողջ գիշեր աղօթել, որովհետեւ պիտի չդադարէր աղօթելէն մինչեւ որ գիտնար Հոգւոյն Սրբոյ զօրութիւնը իր կեանքին մէջ: Աղօթեցինք միասին, և ան բարձրածայն կը հեծկլտար: Այնպէս ծայր տուաւ արթնութիւնը:

«Քանի մը վայրկեան ետքը դռնս կրկին զարնուեցաւ: Իմ սենեակիս կից սերիչ սենեակի մը մէջ մէկը զիս տեսնել կ'ուզէր: Մտայ քովը և տեսայ որ գրասենեակի մարդոցմէ խումբ մը մարդիկ իրենց երեսին վրայ ինկած կ'աղօթէին: Աստուած անոնց ալ խօսած էր: Կրկին աղօթք, հաւաքանք բարձրացան Տիրոջը առջեւ: Մեղքեր խոստովանուեցան և լիակատար նուիրում կատարուեցաւ, որովհետեւ դարձեալ Սբ. Հոգին կը դործէր:

«Անմիջապէս ամբողջ ուսանողութիւնը ներս մտաւ և ծնրադրելով կը թափէին իրենց սրտերը Աստուծոյ ռուսերէն, գերմաներէն, լիթուաներէն և անգլիերէն լեզուներով: Ո՛հ, ինչպէ՞ս կը հալէին սրտեր, ինչպէ՞ս կուլային Տէրոջը առջեւ: Ինչ ուրախութիւն էր այսօրինակ արթնութեան մը մէջ ըլլալ և տեսնել Սբ. Հոգին դործի վրայ: Ի վերջոյ գացին շարունակելու համար աղօթքը իրենց սենեակներուն մէջ, որքան ուշ տեսն չեմ գիտեր:

(Շար.)

Խ. Թ. Ս.

(*) Սոյն թարգմանութիւնը՝ Ճ. Օ. Սմիթին «Արթնութիւնը որուն կը կարօտին» գրքին վերջին գլուխէն է: Ամբողջ դիւր թարգմանուած է ելը՝ Մ. Պօզովեանին կողմէ ի բաց առեալ վերջին գլուխէն՝ որ կը զգնուի 1938ի տպագրութեան մէջ: Այս թարգմանութիւնը կատարեցինք, շատերուն փափսքին ընդառաջելով:

Ծ. Թ.



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ՊԶՏԻԿ ՀՐԵՇՏԱԿ ՄԸ

(Թերթիկի մը առթիւ)

Եռանդուն քրիստոնէայ վաճառական մը կար՝ որ սովորութիւն ունէր գոցել իր խանութը Կիրակի օրերը: Առտուն եկեղեցի կ'երթար իր Տէրը պաշտելու, կէսօրէ ետքի ժամերուն կը պարապէր փողոցները կենալով թերթիկներ բաժնելու: Կիրակի մը շատ յոգնած զգալով կը հանգչէր իր սենեակին մէջ, Դուրսը հեղեղանման կ'անձրեւէր: Գրասեղանին վրայ կային փունջ մը թերթիկներ: Զգաց որ մէկը իր սենեակին դռնէն ներս կը մտնէր, տեսաւ որ իր 11 տարեկան տղան, դուռը բացած դէպի իրեն կը վազէր: Իր հայրը հոն տեսնելով, «Խնչպէ՛ս կ'ըլլայ հայրիկ, այսօր թերթիկ ցըրուելու չե՞ս երթար, հարցուց զարմացմամբ»:

— Դուրսը դօրաւոր անձրեւ մը կայ տղաս, պատասխանեց հայրը տղան գոհացնելու համար:

— Հայրիկ, երբ անձրեւ կայ Աստուած մարդիկը չի՞ փրկեր:

Վաճառականը ի լուր այս հարցումին ցնցում մը կրեց, բայց բացատրելով ըսաւ, «Երբ անձրեւէ, փողոցները շատ մարդ չըլլար, անկից զատ այսօր շատ յոգնած եմ, հետեւաբար այսօր դուրս պիտի չելլեմ»:

— Հայրիկ, քու տեղդ ես երթամ:

— Տղա՛ս, Աստուած օրհնէ քեզ քու բարի մտադրութեանդ համար:

Երբսր մեծնաս կրնաս հօրդ գործը շարունակել:

Մինչ այն տղան կը թախանձէր իր հօրը որ թոյլ տայ իրեն երթալ, սակայն հայրը կը մերժէր ըսելով՝ թէ այս անձրեւին յարմար չէր:

— Խնչ կարեւորութիւն ունի անձրեւը հայր, կը հագուեմ քառուկէ կօշիկներս և կ'առնեմ հովանոցը հետս:» Տղան կ'աղաչէր հօրը, երբ հայրը պահ մը լուռ կեցաւ, այդ լռութիւնը հաւանութիւն նկատելով վազեց ներս և վայրկեանի մը մէջ անձրեւի յատուկ հագուստները հագած վերադարձաւ ուրախութիւնէն ցատկելով: «Հայրիկ, ես պատրաստ եմ, խնդրեմ ինձի թերթիկներ տուր» ըսաւ:

Վաճառականը տեսնելով իր տղուն եռանդը և խանդավառութիւնը տուաւ իրեն թերթիկներէն, պատուիրելով որ զգոյշ ըլլայ և լմնցնելուն պէս տուն վերադառնայ:

Վերացած հոգիով մը տղան դուրս խոյացաւ բաժնելու զանոնք: Առտո անձրեւի պատճառաւ փողոցները լըպըրծուն դարձած էին, և մարդ ալ չէր տեսնուեր փողոցներու մէջ: Երկար ատեն սպասեց մինչև որ թերթիկ մը տայ: Անձրեւ անխնայ կը թափէր և բոլոր փողոցի մէջ մարդ մարդաստնկ չկար:

Իր հայրը, «Երբ լմնցնես տուն վերադարձիր» ըսած էր, քանի որ իր հօրը տեղ կը գործէր գգաց թէ պէտք էր ամէնը լմնցնէր: Վերջապէս հոս մը մնաց իր ձեռքը և մարդ չկար ան

ալ տալու: Ուրիշ փողոց մը մտաւ, հոն ալ մարդ չկար: «Ամէն բանին կերպը կայ, մարդիկ ինծի չեն գար ես ինչու անոնց չերթամ խորհեցաւ: Խոշոր քայլերով կը մօտենայ ամենամօտիկ տունը և կը զարնէ դուռը:

— Ո՞վ է դուռը զարնողը, եկաւ ձայն մը ներսէն:

Իր սիրտը սկսաւ բաբախիլ, կէս մը ուրախութենէն կէս մըն ալ վախէն: Սպասեց վայրկեան մը, երբ տեսաւ որ մէկը չի բանար դուռը, քաջութիւնը հաւաքելով, բռնեց քիչ ուրիշ հարուած մը եւս տուաւ:

— Ո՞վ է ան:

Լուս, ըսաւ ինքնիրեն, հիմա անպատճառ մէկը դուրս պիտի գայ: Սպասեց, բայց մէկը չէր գար դուռը բանալու: Այլեւս տնամբեր կը դռնար իր պզտիկ ձեռքով արագ հարուած մըն ալ տուաւ:

— «Ո՞վ է դուռը կրկին զարնողը» և ինքը շարունակեց զարնել մինչեւ որ դուռը բացուեցաւ, և անա իր առջեւ կը կայնէր կին մը որուն մտահոգ դէմքը բոլորովին ներհակ պատկեր մը կը կազմէր սեմին վրայ կեցողին եռանդուն դէմքին հետ: Դէմքը ժպտով մը զարդարուած յարգալիք ըսաւ. «Ներեցէք ինծի տիկին, ես մասնաւորաբար եկած եմ Աւետարանը բերելու ձեզի», և թերթիկը դրաւ կնկան ձեռքը:

— «Շնորհակալ եմ»:

Տղան թոյած էր արդէն և «կեցէք բարով» խօսքը հովը ետ բերաւ իրեն:

* * * Յաջորդող կիրակի երեկոյեան, պզտիկ մատուռը խռնուած էր ուկնդիրներով: Հոն կը գտնուէր բարի վաճառականը: Հոն էր նաեւ իր աղան որ կը յուսար սորվիլ հօրը գործը: Երգերէն և աղօթքէն ետքը, ժողովին առաջնորդող հարցուց՝ թէ մէկը կայ որ կ'ուզէ վկայել Տէրոջը շնորհքին

վրայ: Կին մը՝ երկնային լոյսը դէմքին վրայ, ոտքի ելաւ և գովեց իր Աստուածը ըսելով, «Փառք Աստուծոյ որ Ան փոքրիկ հրեշտակ մը զրկեց զիս փրկելու համար: Եթէ ոչ անցեալ կիրակի գիշեր իմ մինակութեանս, աղքատութեանս և յուսահատութեանս մէջ վերջ պիտի տայի կեանքիս: Դուրսը տնձրեւը սաստիկ կը տեղար: Մարդկային նեղութիւններու վերջին աստիճանին հասեր էի, կորսնցուցած ըլլալով թէ ամուսինս և թէ աղաս: Երկար պայքարէ մը ետք, տնձնատուր եղայ յուսալքումի, և մտադրեմ էի ինքզինքս կախել: Յանկարծ դուռս զարնուեցաւ: Պատասխանեցի, սակայն դուռը բանալու համար տեղէս չի շարժեցայ, կ'սպասէի որ դուռը զարնողը երթար և ետքը ի գործ դնեմ մտադրութիւնս: Սակայն դրան զարնուիլը շարունակեց մինչեւ որ ես ստիպուեցայ բռնալ զայն:

Անա դրան առջեւ կը կայնէր պզտիկ հրեշտակ մը, գարնանային դէմքով որ ինծի տուաւ թերթիկ մը: Երբ կը նայէի անոր գիտցայ որ Աստուած լքած չէր զիս: Արցունքներս չէի կըրնար զսպել: Խոստովանեցայ մեղքս և խնդրեցի թողութիւն: Փառք Տէրոջ Ան փրկեց զիս»:

Տղան որ այս թերթիկը տուած էր փսփսաց իր հօրը ականջին, «Ահա տս կինն է»: Միայն այն ատեն Քրիստոնեայ վաճառականը հասկցաւ՝ որ Տէրը զրկած էր իր աղան գտնելու մոլորեալ ոչխար մը, թերթիկի մը միջոցաւ:

«Ոսքը քարոզէ... ատենին ու ատենէ դուրս» (Բ.Տիմ. Դ:2):

Թարգմ. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ



ԱՓՎ ԷՏԵՆ ՐՈՒՅ

Պօղոս ընտուլ ափվ էթմէք հագ-
գընտու հագար իքէն շէօյլէ տիյօր,
«Պիրիպիրինիզլէ թէհամմիւլ էտիպ' է-
կէր պիր քիմսէնին պաշգասը ալէհի-
նէ պիր շիքեայէթի վար իսէ Բրիս-
տոս սիզէ պաղըշլատըղը միսիւլիւ,
սիզ տախի պիրիպիրինիզէ պէօյլէճէ
պաղըշլատըղը» (Կող. 3:13):

Պու կիւն տիւնեա սիյասի, իգ-
թիստաի պիր հէյէճան իչինտէ, ֆոգաթ
պու ալթ իւսթիլիէ բաղմէն առէմլէր
քէֆ վէ ճիւմպուշ արգասընտուար:
Կիթտիքէ առէմլէր արասընտա պէն-
լիք, քէնտի լասաթընը արամաղու
տօղրու գուզվէթլի պիր մէյլ վար Ա-
տէմլէրին ոսապէսինի տաիմա տիրի
սագլայան աճվալ օրթասընտա, պաշ-
գասընըն ճիւզի պիր հանլըշնա, նա-
գըս մուամէլէսինէ թէհամմիւլ էտէմէ-
մէք թապիաթը կիթտիքէ քէսպի
իզտիյաս էտիյօր: Պուհուէն նէթիճէսի
օլարագ քէնտի քէնտիսի իչիւն հա-
շայան քիմսէլէրտէ հագգսըղըղը ափվ
էտէն պիր բուհ կէօրմէք մէմուլ է-
տիլմէյօր, օ նատիր պիր մաթա'ու
պէնզէր, տիւնեալիլէրին արասընտա
պուլունմագ, հէր խրիսթիյանըմ տէյէն
քիմսէնին հանընտա տա պուլունմա-
յօր:

Շիւպհէ հօգ հայաթ հագգսըղըղէ
մէմուլ, չօգ տէֆա պու հագգսըղըղ-
լարըն մէմուլ էտիլմէյէն մէնպալար-
տան կէլմէսի ինսանը մէֆթուր էտէն
պիր հալ տըր: Սէվէր իքէն սէվիմէ-
մէք վար, էյիլիէ գարշը նանքէօրանէ
մուամէլէ վար: Պասգէն առէմլէր
թարաֆընտան հանլըշ աշլաշըլմագ օ
լույօր, հիւզ' չէվրիւմէք վուգու պու-
լույօր: Պէօյլէլէրէ գարշը սէվէն վէ
ափվ էտէն պիր բուհու նատիրէն թէ-
սատիֆ էտիլիյօր: Պու նէվ աճվալ ի-

չինտէ թէհամմիւլ վէ ափվքեանի բուհ
անճագ առէմի տօղրու հօլա գըլա-
ղուղլայան գըպլէնիւմա կիպի տիր,
հօգ իսէ հօլու շաշըրմագ միւմքին,
հաթթա ափվ էթմէյէն բուհուէն գալպ-
տէ պուլունմասը հայաթը փէրէշան վէ
հաշամաղը տէյմէգ պիր հալա թէհալ-
վիւլ էտէր:

Էյէր գալպտէ ափվ էտէն բուհ հօգ
իսէ օրատա ինթիյամ բուհու տէրհալ
պաշ կէօթէրիւր, վէ պէնի ինճիտէնի'
ինճիթմէք, պանա հագգսըղըղէ էտէնէ'
հագգսըղըղէ էթմէք պէնտէ մէյասանա
կէլէճէք տիր իսէֆա քի քէնտի քէն-
տիլէրինի բուհանի թալայան չօգ
քէմսէլէրտէ պու առէվէթ բուհու վէ
Մովսէսին շէրիաթ էօմրիւնտէն տէ
տահա էօթէյէ կէլմէք վար Պիր տէ-
ֆա բուհանի գանն էտիլէն պիր հէմ-
շիրէնին' պիր աիկէր հէմշիրէտէն սօ-
ղուգ մուամէլէ կէօրալիւ իչիւն
շէօյլէ տէտիլինի իշիթտիք, «Պէնտէն
պիր առըմ ուզագլանանտան պէն
տէօրթ առըմ ուզագլաշըրըմ»: Թէք-
րար պիրատէր թանըլան պիր քիմսէ-
նին' տիկէր պիր պիրատէրտէն ինճին'
տիյի իչիւն, «Պագ պէն օ առէմէ նէ
հաիարըմ» տէյէրէք թէհատա էթտի-
լինի կէօրտիւք:

Ան սէվկիւլիլէր, «Խէլաս օլմուշըմ
պէն արթըգ Բրիստոսուըմ» տէյէն
քիմսէլէրտէ կէօրիւլէն պու բուհ' Յի-
սուըն տաիմա ափվ էտէն բուհուէնտան
նէ գատար ֆարգլը: Յիսուըն սէվէն
պիր քիմսէ նասըլ Օնուէ խաթըր ի-
չիւն պիրատէրինին շիքեայէթէ սէպէպ
օլան հօգթասընա թէհամմիւլ էտէմէ-
յօր վէ օնա ափվ էտէմէյօր: Գալպի
հէնիլէնմիշ օլան քիմսէտէ էսքի առէ-
մէ մախսուս պու թապիաթ նասըլ
տէյիլիլմէմիշ: Վէ Բրիստոստա անը
տա տէյիլմէյէ գուզվէթ հօգ մը: Պի-
զէ տէնիլէն պու տըր, «Բրիստոս սի-
զէ պաղըշլատըղը միսիւլիւ» վէ Բը-

ԻՒՉ ՍԵՖԻՆԵԼԵՐ

Ազիմ Ալլահը մըզըն Քէլամը պի-
զէ պէյան էտէր քի, իշինտէ հաշա-
մագտա օլտուզըմըզ շու պէօյիւք
տիւնհամըզա Քէնտի խալիպի թարա-
ֆընտան իւշ Սէֆինէլէր իրաւ օլուն-
մըշ տըր իմտի անլէրի պիրէր պիրէր
մէշգ վէ միւթէլաա էտէլիմ:

Պիրիննի Սեֆիննի խուրուճ 2:3 տէ
պուլունուպ՝ անտէ անճագ պիր ճան
գուրթուլտը, վէ պու զաթ Մովսէս

քիտոս նաւըլ հէր կիւն, հէր տագիգէ
պաղըշլայօր:

Աֆվ էթմէք Ալլահըն պիզէ աֆվ
էթմէսի կիպի օլմալը տըր, աֆվ էտէ-
պիւմէք վէ ունուտապիւմէք, տաիմա
աֆվ էթմէյէ հազըր պիր մէվգի վէ
քուհաա հաշամագ տըր Պիլաքս պիզի
իննիթմիշ պիր քիմսէյէ հօլտա ըսթ
կէլիր իսէք Քրիստոսըն մուհապպէթի
իլէ անա պագաճագ վէ մուամէլէ է-
տէճէք եէրտէ, կէօրմէզտէն կէչէրէք,
հախօտ սօղուգ պիր սէլամ իլէ, հիշ
եիւզիւնիւ կէօրմէսէմ տահա էյի իտի
տէրճէսինէ կէչէրիզ: Օհ, Յիսուս խա-
շըն իւզէրինտէ հէփ տիւշմէնլէրինէ,
վէ շիմտի տէ սանա վէ պանա էօյլէ
պագաա նէրէտէ գալըր իտիք:

Պրաքալըմ քի Ալլահըն մուհապ-
պէթի գալպիմիզի օ գատար տօլտու-
րա քի, պուզզ վէ աաալէթ օրտաա
մահալ պուլմայա: Օլ զէման, «Պիրի-
պիրինիզէ հալիմ վէ չէֆիք օլուպ՝ Ալ-
լահ տաիի Քրիստոս վասըթասըլլէ
սիզէ աֆվ էյլէտիյի կիպի եէքտիկէ-
րինիզի աֆվ էտինիզ» սէօզիւ ճէլիլ
պիր թէճրիպիյի չախսիյէմիզ օլաճագ
տըր» (Եփես. 4:31, 32):

Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խաի իշթէ քիւշիւք պիր Սէֆինէտէ
պիր մասուլ հաթմագտա, գօրգու
սէպէպիյլէ էպէվէյնի Անը Նիլին սու-
լարը իւզէրինէ թէրք էթմիշ. լաքին
օլ մասուլ իւզէրինտէ Գատիրին թագ-
տիրի էզէլիսի օլմաղլէ պիզզաթ Ալ-
լահ Անը հըֆզ էտիյօր իտի. վէ պիր
հօլ իլէ օլ սէֆինէտէն չըգարըլըպ
Փարաւոնըն Սէրայընա ալընարագ մէ-
լիք Փամիլեսսընըն պիր ազասը հա-
լինտէ պէօյիւլիւպ Մըսըրըն իւմինտէ
թէրագգը էթմէքտէ իտի:

Էնճամ պէօյիւլիւպ ազլը պալիզ
օլտուգտա, քէնտի գալմընըն չէքմէք-
տէ օլտուզը հագարէթ, Ֆէրհաա վէ
ֆիզանը Սէմավաթա վասըլ օլմաղլէ,
Ալլահ գալմընը Մըսըրտան չըգարմագ
իւզրէ Սէրայտա հաշայան Մովսէսի
պիր միւրշիտ հալինտէ թութաու:
Մովսէս քէնտի տալէթինի անլատըգ-
տան սօնրա Մըսըրըն ճիւմլէ սալթա-
նաթ վէ ըսհաթընը, իզզէթ վէ խա-
զինէլէրինի թէրք էտէրէք, Ալլահըն
գալմըլ իլէ էզիյէթ չէքմէյի թէրճիհ
վէ ինթիխապ էյլէտի. գիրա «Կե-
րիւնմիյէն գաթը կեօրիւր կիպի սեպաթ
էյլէթ» Իպր. 11:27:

Նէ աճաիպ իման վէ կէօրիւշ,
կէօրիւնմէյէն գաթը, կէօրիւնմէյէն
ալէմի, կէօրիւնմէյէն մէլէքլէրի, ճէ-
լալ վէ մէլէքիւթիւ իման իլէ սէյր
էտէրէք՝ շու զէմինին, զէմանի վէ
զէմինի օլան պիլ ճիւմլէ էլէմ վէ
մուգայագալարընա թէհամմիւլ էտէ-
րէք. զալիպ, մուգատտէս վէ զայրէթ-
լի պիր էօմր հաշայարագ չօզլարը
Սալահա, չօլ կէօրիւնմէյէն Զաթա վէ
ալէմէ իրշատ էտէրէք՝ Սէմանըն հըլ-
տըզլարը կիպի էպէտ իւլ ապաա զի-
յատար օլմագլըզը Բապպ ճիւմլէմիզէ
ինսան էյլէյէ, Ամին: Դանիէլ 12:3:

Իֆիննի Սեֆիննի, Նոյըն ինչա էյ-
լէտիյի Սէֆինէ օլուպ անտէ իսէ սէ-
քիզ քիմսէլէր գուրթուլտըլար Պիւ-

թիւն պէշերիյէթ կիւնտնո պարմըշ, նէ ճան, նէ Ալլահ, նէ Սէմա, նէ ճէ-հէննէմ վէ նէ տէ էպէտիյէթ անլէրէ մատտէ օլմայըպ սալթ վէ անճագ, եէմէք վէ իշմէք, էվլէնմէք վէ էվ-լէնտիւրմէք իլէ մէշղուլ իտիլէր. նա-սըլ քի շիմտի տախի ասըմըզ աշնի աճըլը հալէ կիրիթթար օլմուշ տըր: Փագաթ՝ Ալլահ քէնտի ազիմ շէֆգաթ վէ մէրհամէթ ինտէն նաշի՝ պիր խէլաս չարէսի թէրթիպ էթտի. թաքի քէն-տինէ հէր իման վէ իթաաթ էտէն քիմսէլէրի տիւնեա իւզէրինէ կէթի-րէճէյի հէյպէթլի սու թուֆանընտան խէլաս էտէ: Իշթէ զէմինտէ պիր սու-լիհ աաէմ պուլունըպ՝ անա պիր սէ-ֆինէնին ինչասընը էմր էյլէտի: Իմտի Նոյ, պիր թարաֆտան սէֆինէյի հա-զըրլումագտա աշնի վագթտա սալահ վախլի հալինտէ, Ալլահն կիւնահքեար տիւնեա իւզէրինէ կէթիւրէճէյի սու թուֆանըն խապէր վէրմէքտէ իտի: «Նոյն կիւնլէրինտէ օլտուզը կիպի, Իպն իւլ ինսանըն կիւնլէրինտէ տախի էօյլէ օլմագ աըր» Մատթ. 24:37:

Նոյ վէ ֆամիլիտաը սէֆինէյէ կիրտիքլէրի կիւնէ գատար, ատէմլէր նէ սէֆինէյէ վէ նէտէ սալահ վախլինէ էհէմմիյէթ վէրտիլէր: Իման էթմէտի-լէր, ֆագաթ վագըթ թէմամ օլտուզտա սէֆինէնին գափուսընը պիզգաթ Ալ-լահ քէնտիսի գափատը, վէ արթըզ անը հիչ պիր քիմսէ վէ հիչ պիր գուվլէթ աշամագ իտի: Իմտի էյ սէվ-կիւլիւ տօսթում, տիզգաթ էյլէ, հագ-գընտա դիքր էտէճէյիմ իւշիւնճիւ սէ-ֆինէնին գափուսը տախի էպէտէն ա-չըլմամագ իւզրէ գափանագտա աըր: «Գափու գափանը» Մատթ. 25:10:

Իւշիւնճիւ վէ սօն Սէֆինէ, Բրիս-տա սըր, սէմա զէմին եանգօ վէրսին Հալէլուէա... պիւթիւն տիւնեա իշիւն պու սէֆինէտէ եէր վար տըր: Ճիւմլէ միլլէթլէր վէ գապիլէլէր վէ գալմ-

լար վէ լիսանլարտան օլանլար իշիւն պու սէֆինէնին գափուսը շարգա, շի-մալա, ճէնուպա վէ զարպա տօղրու աչըլմըշ աըր: պու պէօյիւք սէֆինէ տիւնեամըզըն օրթասընտա տուրմագ-տա վէ հէր թարաֆտան Ալլահն հա-գիգի էվլատլարը, սալահ վախլէրի պու սէֆինէյէ ատէմլէրի տալէթ է-տիյօրլար:

Իմտի, էյ տօսթում, տուր, պագ վէ աինլէ. սէն պիր էօլիւմսիւզ վար-լըզ սըն, սէն չօլ եագլաշմագտա օլան պիհուտուտ էպէտիլէթէ տօղրու սիւ-րաթ իլէ սէյիրթմէքտէ սինա էօմրիւ-յիւն չու հագիք թէլի գօփմագտան, գափու գափանագտան իսալիպինի թէ-զէքքիւր էյլէ: Կէլ, կէլ վէ կիր, գիրա մագաղու վագթ շիմտի տիր, օյալա-նաճագ սըրա տէյիլ տիր. ճանընը իսալիպինէ թէօլիմ էյլէ, օ զէման հէմ շիմտի էհնիյէթտէ օլուպ մէսուտ եա-չարսըն հէմտէ կէլէճէք տարլարտա իլ էլ էպէտ, Բագպը կէօնէնիւսին:

Էյ Սալահ վախլիքի, պիզ տախի քէնտի նէվպէթ եէրիմիզտէ ուլանըզ տուրուպ՝ գալայը հըֆզ էտէլիմ վէ Բուհ իւլ Գուտսըն գուվլէթի իլէ գուշանըպ, վագ, շէնտէթ, քիթապէթ վէ իթալարտա տէվում էտէրէք, արա-լարընտա եաշամագտա օլտուզումըզ ճանլարը Սէֆինէյի սալէք եհիլիմ:

«Պու շէյլէրաէն սօնրա կէօրտիւմ քի ճիւմլէ միլլէթլէր վէ գապիլէլէր վէ գալմլար վէ լիսանլարտան օլա-րագ քիմսէնին սայամատըզը պէօյիւք պիր ճէմաաթ պէյաղ խիլաթլար կիյ-միշ թալթըն էօնիւնտէ վէ գուզունըն հուզուրընտա տուրուպ, խէլաս թախթ-տա օթուրան Ալլահնըմըզ վէ Գու-զուլա մախսուտ աըր՝ տէյու նիտա է-տիյօրլար իտի» Վահի 7-9—10:

Կ. Յ. ԹՈՒՄԱՆԱՆ

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

ԱՄԷԼԻ ԳՈՒՏՍՈՒՅԷԹ ԷՕՍՐԻԻ ԻՋԻՒՆ ԹԷԼԳԻՆԱԹ

1. Ալլահըն, եալընըզ Ալլահըն քահթը
ճազարընսա օլմապ:

Ալլահըն նազարը թահթընտա օլ-
մագ սէօզլէրինի օգուր իքէն. տէրու-
նէն րահաթ վէ սառւտէ պիր հալ հիս-
սինէ միւթթալի օլմայօրմընըն: Օ նէ՛
խօշ պիր շէյ տիր, էվվէթ օ մէլճա
գայասը, թէրավէթ վէրէն չիյ, նուր
փէրթէվի կիպի ճանա փէք շիրին
տիր:

Օհ, նի՛չիւն տաիմա պէնի կէօր-
մէսի, տնլամասը, թագտիր վէ մէտն
էթմէսի իչիւն պիր քիմսէ աբաշտը-
րըրմ: Պէնիմ աբաշտըրմ ինսան կէօ-
զիւ՝ պահալը պիր քէրէսթէնին իւզէ-
րինտէքի նազիք րէնքլէրի խարապ է-
տէն հազըճը փէրթէվէ պէնզէր: Պաշ-
գալարըն կէօրմէսի իչիւն հափըլան
հէր պիր տմէյ՝ Ալլահըն նազարընտա
քէնտի հիւսնինի զայպ էթմիշ օլուպ,
էլտէն էլէ կէչմիշ չիչէյէ պէնզէմիշ օ-
լուր, քի քիմսէյէ հէտիյէ էտիլէմէզ:

Օհ, էյ ճանըմ, սահրա չիչէյի կի-
պի օլ. օ պէօյիւր, աչըլըր, նէմա պու-
լուր Ալլահըն իրատէթինէ կէօրէ վէ
քիմսէտէն կէօրիւլմէյէրէք: Էվվէթ օ
սահրա չիչէյի իւզէրինտէն կէչիպ
տէօնէն գուչլարըն քէնտինի կէօրիւպ
կէօրմէմէսինի, վէ հէնուզ աչըլմըշ
հափրագլարընըն րիւզկհար վասիթա-
սըլլէ օրայա պուրայա տաղըլմասընը
սալա գայդու էթմէզ:

Հիչ պիր վէճհլէ տօսթընա, ագ-
րապալարընա, չիրքէթի պէշէրիյէյէ
տօղրու օլան վազիֆէնի իմալ էթմէ,
ֆագաթ կիւնին պիր գըսմընը սէնին
վէ Ալլահըն իչիւն սագլամաղը ու-
նութմա: Եալընըզ Ալլահա մալիւմ օ-

լան տմէլլէր իճրասընտա օլմագլըզը
ֆիքրինտէ թութ: Օհ, չահտիմիզին
եալընըզ Ալլահ օլմասը նէ՛ թաթլը
տըր: Պու էն եիւքսէք գուտսիյէթ հա-
յաթը տըր, վէ էն միւքէմէլ հալը
սաստէթ տիր:

Պիր վալիտէնին քէնտի չօճուզը
իչիւն սագլամաղը էն պահալը շէյ վէ
պիր չօճուզըն քէնտի վալիտէսինի ա-
փանաղա կէթիրմէք իչիւն հազըրլա-
տըղը հէտիյէնին վէրտիյի քէյֆ: Ալ-
լահըն հուզուրընտա հաշայան վէ տա-
իմա Օնու խօշնուտ էթմէք իսթէյէն
պիր Ալլահ էվլատընըն մալիք օլտըղը
մէսէրիյէթ գատար փաք վէ ուլվի օ-
լամազ:

Աթիտէքի սէօզլէր նամալիւմ պիր
քիմսէնին քետղըտ փարչալարընըն ի-
չինտէ պուլուրմըշ տըր...: «Պիր ֆա-
գիր գատըն հագգընտա պանա խապէր
վէրտիլէր, պաշգալարընա նուսուռնէ
օլմագ իչիւն պէշ զրուշ վէրտիմ: Վէ
շիմտի է՛յ Ալլահըմ սէնին իչիւն վէ
սէնին խաթըրն իչիւն եիրմի պէշ զու-
րուշ կէօնտէրմէք իսթէյօրում, վէ օ-
նու չախսի մէսարիֆիմտէն քէսէրէք
կէօնտէրէճէյիմ...»

«Ետըն Հէնրի պէնի կէօրմէյէ կէ-
լիյօր. քէնտինի նէ գատար սէվէրիմ,
ֆագաթ օ քէնտի գատիմ տօսթընտ
տօղրու նէ գատար սօղումըշ տըր: Օ
պէնի ինճէթմէք իսթէտի, պիլմէյօր քի
օնտան պէնիմ խապէրիմ վար: Եա-
րապա պանա հարտըմ էթ, քի քէն-
տինէ տֆիլ էթմիշ օլտըղըմ տէրխաթըր
էտէյիմ, վէ քէնտինի սիրուր իլէ գա-
պուլ էտէպիլէյիմ: Եալընըզ Սէն պի-
լիրսին քի պու խուսուստա նէ գատար
էլէմ չէքմիշիմ...»

«Տիւն էվտէ հալընըզ իտիմ, վէ
գալպիմ մահզուն ֆագաթ րուհում
սէլամէթտէ իտի Ալլահ իլէ գօնուշ-
մաղա ճէհտ էթտիմ, զանն էտէրսին Օ

Արեշ Ֆուրուհը

Ճօն Ֆլէշըր պիւր կերակի կիւնիւ-
ստէթի իւզդէ մինայէրինն պաշընտա-
խտի Խըտմէթ թէրէննիւմ վէ տուա
իլէ պաշլատը, ֆազաթ անսըզըն վազը
վէ վազընըն մաստէսի պիւսպիւթիւն
ֆիքրինտէն չըգաըն վազընը վէ վա-
զընըն մաստէսինի տէրխաթըր էթմէք
իչիւն չօգ չապալատը, ֆազաթ նա-
ֆիլէ Թէրէննիւմ թէրէննիւմ արգա-
սընտան, տուա՝ տուա արգասընտան
օլույօր, վազա պաշլալաճազ վազըթ
կէլմիշ հալա Ճօն Ֆլէշըր նէ՝ վազ է-
տէճէլինի պիլմէյօր իտի, Ֆազաթ
մաստէ վար հօգ գալգմալը իտի
կէօզիւնիւն էօնիւ գարարմալա պաշ-
լատը, օ հալտէ ալաղա գալգաըն Հէ-
ման օ սըրատա նաբուգդոնոսորըն
ֆուրուհը կէօզիւ էօնիւնէ կէլաի,
ուֆուգ աշըլաը վէ էֆօքսար վարա-

հազիգաթէն եանըմտա տուրույօր իտի,
վէ կիթաիքէ միւթէսէլլի օլտում վէ
ազալմըն սաթթլարընը Ալլահըն հու-
զուրընըն թաթլը հիսսիլէ կէչիւրտիմ
նէ տէտիմ, նէ եազաըմ պիլմէյօրում
ֆազաթ տիւնքի կիւնին խաթըրէսի
պէնիմ իչիւն թաթլը րաիհա կիպի
գալմըն տըր»:

Չօգ ինթիմալ սօն կիւնաէ, գալա
էտիլմէսի վէ սազլանըլմասը լալըգ օ-
լան չէյլէր, անճազ օ ուֆազ ամէլլէր
տիլլէր քի Ալլահըն նազարը թահ-
թընտա իճրա էտիլիյօր Է՛յ Ալլահըմ
սէնին տէվաթի հուզուրընըն հիսսիլէ
եաշամաղը, սէնին իչիւն իչլէմէյի, է-
լէմ չէքմէյի վէ սէնին թարաֆընտան,
անճազ սէնին թարաֆընտան տէլալէթ
օլուհմաղը պաիհա թալիմ էյլէ:

ԵՐԷՑ

Յ. Գ. «Ալթուն ուֆաղը» սէրլէվ-
հասը թահթընտա իքինճի մատտէ «հիլ-
միլէթ» օլաճազ տըր, կէլէճէք նուս-
իւտէ անը արալըպ հեք հալէք օգու:

մաղա պաշլատը վաղա միւպաշէրէթ
էթտի, վէ Ալլահըն ըուհու քէնտինէ
սէյլէմէք իչիւն աճաիպ պիւր ճէսա-
րէթ վէլաթ, վէ ճէմաթ հօգարտան
Բուհուն վաֆթիլընէ մալիք օլտը:

Քէնտինն հիչ պիւր չէյտէն խա-
պէրի հօգ իտի, լաքին օ կիւն քիլի-
սէսէ պիւր զաաըն վար իտի, քի հա-
լաթընըն թէհալա էտիլմէսինէ րաղ-
մէն Ալլահա խըտմէթ իչիւն օրատա-
խտի Մէրգուլմէնին զէվճի Ֆլէշըրա
պուղղ էտէր օլաուղընտան եէմին էթ-
միշ իտի քի էյէր գարըսը օնուհ խըզ-
մէթինէ կիտէր իսէ քէնտինի էվաէքի
ֆուրուհնա աթաճազ իտի Ալլահ գա-
տընըն տուտընա ճէվապէն օ վաղը
Ֆլէշըրա վէլաթիլմիշ իտի, վէ ճէվապ
նարուգդոնոսորըն աթէշ ֆուրուհը
իտի Գաաըն Բապա իչիւն ֆուրուհնա
պիլէ աթըլմաղա հազըր օլմըն իտի
իչլէ վաղըն զալա օլմասընտան սէ-
պէպ պու իտի, թաքի Ֆլէշըր աթէշ
թէճիւրպէսի իչիւնտէն կէչէն պու գա-
տընա եարտըմ էտէպիլսին:

Նէ զէման գաաըն էվէ եէթիլաթի
իսէ ֆուրուհն չիտտէթլի եանըյօր վէ
զէվճի գաիուտա տուրուպ փըչաղը
պիլէյօր իտի Գաաըն պիլա խալֆ
նէրտիպանլարտան հօգարը չըգըպ ճէ-
սուրանէ ֆուրուհն իչիւն հազըր օլտու-
ղընը զէվճինէ խապէր վէլաթի Պու-
հուն իւզէրինէ տաէմ ափանսըզ եըլ-
տըրըմտան վուրուլմըն կիպի գըրըլ-
տը, էլինտէն փըչազ եէրէ տիւշտիւ,
վէ տիղ իւզէրի կէլէրէք գարըսընա
խիթապէն, «Օ՛հ, պէնիմ իչիւն տուա
էթ, պէնիմ իչիւն տուա էթ» տէյի
ֆէրեատա պաշլատը:

Պիղ զէվճիւր պու նէվ պիւր տի-
յանէթ ուղընտա անճազ տիղ իւզէրի
կէլիւրիպ Տիկէր չէչիտ էօմրլէրին պի-
զիմ իչիւն պիւր թէէսիլի հօգ տըր:
Մուգատտէս գահրիմանլըգ զէվճինին
խէլասընա սէպէպ օլտը, ճիւզի պիւր
գօրգաղըգ անը հէլաքա մահքիւմ է-
տէճէք իտի:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՅԷ

Նախահարց պաշտամունք կատարել Ճաբոնի և Չինաստանի մէջ սովորութիւն է կը կարծէինք: Սակայն թերթի մը տուած լուրին համաձայն Պալթիկի ծովեզերեայ գերմանական քաղաքներէն Մէքլէնպէրկի մէջ, որ ծայրայեղ գերմանականութեան կեդրոնն է, այս հին հեթանոսական սովորութիւնը սկսած է վերակենդանանալ: Ազգ. Ընկ. կուսակցութեան պետը հըրամայած է՝ որ անգործածելի մատուռներ նախահարց պաշտամունքի համար սրահներու վերածուին, ուր նախահայրերու յատուկ սեղաններ պիտի կանգնուին, անոնց վրայ ընտանեկան անուններով և խորհրդանշաններով: Մարդ որպիսի խոր անկում մը կ'ունենայ երբ Բրիստոսի ճշմարիտ հաւատքէն չեղի:

*** Ամերիկեան թերթի մը համաձայն Շիգակոյի մէջ կիսաէք էպէյթ անուն մէկը ինքզինքը «Երկնային Պատգամատու» կը հաշակէ: Այս մարդը ժամանակ մը զգաստարանի մը մէջ մնացած է, և այժմ ալ մտքի քննութեան ենթակայ է պետական բուժարանի մէջ: Հայր էպէյթ հարիւր հետեւորդներով շրջապատուած է որոնք գերիի մը պէս կը հնազանդին իրեն, որովհետեւ կը հաւատան թէ ան մահ-կանացու ծնողքէ մը ծնած չէ, այլ կաղմուած է «Յիսուս Բրիստոսի առճիւններէն»: Իր շրջապատը խստօրէն վաճակաւն է: Ինքը կը հագուէր եպիսկոպոսական զգեստ և գդակ, այս վերջնոյն վրայ կան գրուած բազմաթիւ խորհրդաւոր նշաններ և անըմբռնելի բառեր: Իր հետեւորդները հերոսաբար կը հագուին վաճակաճիւններու նման Յոմենայն դէպս այս ինքնակոչ «Երկնային Պատգամատու» կը շարու-

նաիէ իր ճամբան և իր հետեւորդներուն թիւը հետզհետէ կ'աճի:

Հին աւած մը կ'ըսէ «Երբ ճշմարիտ կրօնքը դռնէն դուրս կ'ելլէ նախապաշարուած և մոլորութիւնը պատուհանէն ներս կը մտնէ»:

*** Մօտերս Իտալիոյ մէջ օրէնք մը հրատարակուած է, որուն համեմատ երկրին մէջ բոլոր դպրոցական տղաք պէտք է ճաշեն դպրոցի մէջ, ծախքը պիտի հոգացուի պետութեան կողմէ աղքատ ուսանողաց համար, իսկ հարուստի տղաք վճարովի պիտի ճաշեն: Ծաշէն առաջ պիտի կատարուի ազօթք մը հետեւեալ ձեւով. «Ով Տուչէ, շնորհակալ եմ քեզմէ ինչ որ կուտաս ինձի պահելու համար զիս զօրաւոր և առողջ: Տէր Աստուած, պահէ՛ Տուչէն որ երկար ապրի ֆաշիստ Իտալիոյ համար»:

*** Տիկդադուրական երկիրներու մէջ միսիօնարութեան կրօն վնասը ցոյց տալու համար ցոյց տանք Գեյրմանիան որպէս օրինակ: Գերմանական միսիօնարութեան համար արտասահման երթալու յատկացուած է ամսական 250,000 մարք, սակայն կառավարութիւնը կ'արգիլէ դրամին արտածումը և հետզհետէ սեղմումի կ'ենթարկէ զրկուածը: Մօտերս հրամանագիր օրէնք մը հրատարակուած է, որուն համաձայն նոր միսիօնարներ պիտի չզրկուին, հինքը միայն պիտի շարունակեն, զրկուած դուժմորին ալ մէկ մասը միայն պէտք է զրկուի:

Վստահելի կրօնական ղեկավարներու ըսածը սո՛ւ է՝ թէ շատ հեռու չէ այն ժամանակը ո՛ւր Ամերիկա և Անգլիա պիտի ստիպուին յանձն առնել գերման միսիօնարութիւնը պահելու հոգը:

ՆՈՒՐԱՏՈՒՌԻԹԻՒՆՆԵՐ

Եղբայր մը՝ որ չուզեց յականէ յանուանէ յիշուիլ, հինգ տարբեր հասցէներու 1 տարուան «Աւետարանի Զայն» կը նուիրէ:

Նոյնպէս՝ եղբայր Թորոս Հայաթի, չորս տարբեր անձերու, մէկ տարուան «Աւետարանի Զայն» կը նուիրէ:

Եղբայր Մելքոն Մելքոնեան, թերթիս հրատարակութեան առթիւ, առ ի խնդակցութիւն, 10 Ե. Դ. կը նուիրէ՝ «Աւետարանի Զայն» ի ֆօնտին:

Մեզ քաջալերող սոյն յարգելի նուիրատուներուն, խմբագրութիւնս կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնները:

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մարմնութեա» հոգեւոր պարբերաթերթ. հասցէ՝ փոստակոյթ թիւ 303, Հալէպ:

«Հասկ» պաշտօնաթերթ Կիլիկիոյ կաթողիկոսարանին, Անթիլիաս, Լիբանան:

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եզիպոս՝	25 Ե. դ.
Ամերիկա՝	1½ տոլար
Ֆրանսա եւ Սիւրիա՝	30 ֆրանկ

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական անձուկ վիճակը, յօժար ենք այդպիսիներուն գեղջեալ գնով մը դրկել քերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալին միջոցաւ:

ՄԵՐ ԲՈՎԸ ԿԸ ԳՏՆՈՒՄԸ ՇԵՏԵՒԵԱԼ ԳՐԲՈՅԿՆԵՐԸ

1. Չարլի Գըլզըն	24 Էդ	Դին՝	1 Ե. դ.
2. Սամուէլ Մօրիս	32 "	"	1 Ե. դ.
3. Գործի Պիլատոսի	24 "	"	1 Ե. դ.
4. Իզնասիոս	20 "	"	կես Ե. դ.

Վերոյիշեալ գրքիկները հանելի, խիստ հետաքրքրեալ եւ հոգեշունչ պատմութիւններ են: Դիմել խմբագրութեանս հասցէին: